

ճընի շրջանակին մէջ, մեծ թիւով Հայեր 7—8 հոգի-
նոց խուճբերով շղթայի զարնուած՝ ամենագէշ վար-
մունքներու գոհուած են :

Երէկ ուշ ժամանակ հոս հասայ և տեղեկացայ թէ,
հակառակ Ձերդ վսեմութեան հրամանին, Քերովրէ Է-
ֆէնտին և իր դասակարգին պատկանող Հայերը ա՛լ ա-
ւելի մեծ խստութիւններու առարկայ են, և թէ Հա-
յերէն մաս մը դաղթելու սկսած է :

Նախորդ կուսակալ Ճէվան պէյ, թերթերու մէջ
հրատարակուած իր տեղեկագրով կը հաւաստէ թէ՛
կոտորածը սկսած է գրոյցի մը հետեւանքով — որուն
ստութիւնը այլապէս ծանօթ է Ճավիտ պէյի — որուն
համաձայն իբր թէ կին մը և քանի մը իսլամներ Հա-
յերու կողմէ սպաննուած են այգիներուն մէջ :

Սակայն դատարանական թղթերով և վաւերական
տեղեկութիւններով վճռականօրէն հաստատուած է թէ՛
ջարդերու շշուկները Բամազան Պայրամիէն իվեր շըր-
ջան կ'ընէին : Ընկերակիցներս ալ այս կէտը հաստա-
տած են իրենց հեռագիրներուն մէջ :

Ըստ իս, միմիայն Ճէպէլը-Պէրէքէթի սանձագին
մէջ, կոտորուած Հայերու թիւը նուազագոյն 3000ը
կ'անցնի : Բացի Չորք-Մարդուանէն, ուր Հայերը օրի-
նաւոր դիմադրութիւն մը ըրած են, բոլոր գաւառին
մէջ հայապատկան միակ շէնք իսկ կանգուն չի մնար :

Հետեւաբար եթէ պատերազմական ատեանը՝ աղէ-
տէն փրկուած Հայերը նեղելէ չարգիլուի, ներկային և
ապագային համար բացած պիտի ըլլանք անբուժելի
վէրքեր :

Պատիւ ունիմ վերջին անգամ ասիկա Ձերդ վսե-
մութեան յայտարարելու :